ԱԿԱՆԱՎՈՐ ԴՐԱԿԱՆԱԳԵՏ

Դ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արսեն Տերտերյանը մեկն էր անցյալի հայ առաջավոր ինտելիգենցիայի այն լավագույն ներկայացուցիչներից, որոնք ջերմորեն ընդունեցին սովետական կարգերի հաստատումը մեր երկրում և իրենց ամբողջ եռանդն ու հարուստ գիտելիքներն ի սպաս դրեցին սովետական գիտության և կուլտուրայի զարգացման, երիտասարդ կադրերի պատրաստման գործին։



Իր գիտական-մանկավարժական գործունեությունը սկսելով դեռևս ռուսական առաջին հեղափոխության տարիներին, Ա. Տերտերյանը շուրջ կես դար հավատարմորեն ծառայեց հարազատ ժողովրդին և հայագիտությունը հարստացրեց բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններով։ Թեմական դպրոցի ուսուցչի համեստ վիճակից մինչև գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը,—ահա այն ուղին, որ անցել է նա ազնիվ աշխատանքով ու գիտական բեղուն գործունեությամբ։

I

Արսեն Հարությունի Տերտերյանը ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 22-ին (հին տոմարով), Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզի Շուշի-բենդ գյուղում։ Նախնական կրթությունը ստանալով գյուղի ծխական դպրոցում, այնուհետև նա փոխադրվում է Շուշի քաղաքի հայոց թեմական դպրոցը, որը փայլուն գնահատականներով ավարտում է 1902 թ.։ Նույն թվականին նա ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական-մասնագիտական բաժին։ Ճեմարանն ավարտելուց հետո, 1905 թ. Ա. Տերտերյանը վերադառնում է Շուշի և երկու տարի մանկավարժական աշխատանք կատարում թեմական դպրոցում՝ դասավանդելով հայոց գրականություն, պատմություն և այլ առարկաներ։

Ուսումը շարունակելու նպատակով 1907 թ. նա մեկնում է Պետերբուրգ, ուր և ընդունվում է Հոգևոր-նյարդարանական ինստիտուտ։

Ռուսաստանում անցկացրած տարիները վճռական դեր խաղացին Տերտերյանի մտավոր կյանքում։ Այնտեղ էր, որ նա լայնորեն շփվեց ուսանողական առաջավոր շրջանների հետ, անմիջականորեն հաղորդակից եղավ ռուսական գիտությանն ու մշակույթին, հափշտակված կարդաց և ուսումնասիրեց ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքի խոշորագույն ներկայացուցիչներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու և ուրիշների երկերը։ Նա պատկանում էր այն առաջադեմ ուսանողների թվին, որոնք միաժամանակ ակտիվ հետաքրքրություն էին ցուցաբերում դեպի հասարակական կյանքը, ձեռք բերում անլեգալ գրականություն և ուսումնասիրում մարքսիզմը։

Նյութական ծանր պայմանների հետևանքով, սակայն, Տերտերյանը չի կարողանում շարունակել ուսումը և շուտով վերադառնում է Կովկաս, աշխատում որպես ուսուցիչ։ Սկսած 1909 թ. նա մշտական բնակություն է հաստատում Երևանում և պաշտոնավարում թեմական դպրոցում, դասավանդելով հայոց լեզու, գրականություն, պատմություն և այլ առարկաներ։ Ինքնակրթության շնորհիվ նա խորացնում ու հարստացնում է իր գիտելիքները, ծանոթանում

համաշխարհային մշակույթի նվաճումներին, ուսումնասիրում գրականագիտական ու գեղագիտական ուղղությունները և մշակում իր հայացքները հայ գրականության զարգացման պրոցեսի վերաբերյալ։

Երկար տարիներ զբաղվելով մանկավարժությամբ, Ա. Տերտերյանը բեղմնավոր աշխատանք է կատարում մատաղ սերնդի դաստիարակության գործում։ Որպես առաջավոր գաղափարներով տոգորված ուսուցիչ, նա պայքար է մղում բարացածության ու սխոլաստիկայի դեմ ուսումնական պրոցեսում, նոր վերաբերմունք մշակում դեպի աշակերտները և նրանց վարժեցնում ինքնուրույն աշխատանքի։ Աշակերտների ու շրջապատի մեջ նա արթնացնում է հետաքրքրություն, ջերմ սեր ինչպես հայրենի գրականության, այնպես էլ ռուս և համաշխարհային կուլտուրայի նկատմամբ։ Այդ գործին է ծառայում նա ոչ միայն ժողովրդական ուսուցչի իր պարտականությամբ, այլև հրապարակային ելույթներով ու գրական-քննադատական գործունեությամբ։

1900-ական թվականներից ի վեր Ա. Տերտերյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում հայ գրական կյանքին։ Մամուլում նա հանդես է գալիս հայ գրականությանը նվիրված քննադատական հոդվածներով, որոշակիորեն սահմանազատվելով լիբերալ-բուրժուական մտայնությունից։ Ի տարբերություն վերջինիս ներկայացուցիչների, որոնք արհամարհական վերաբերմունք էին ցուցաբերում դեպի մեր գրականության դեմոկրատական հոսանքը, Ա. Տերտերյանը հետևողականորեն պաշտպանում էր դեմոկրատ գրողներին և ամեն կերպ նպաստում նրանց ժողովրդականացմանը։ 1910 թ. նա հանդես եկավ իր առաջին մենագրական ուսումնասիրություններով, որոնցից մեկը նվիրված էր Մ. Նալբանդյանին, իսկ մյուսը՝ Վ. Տերյանին։ Դրանց հետևեցին նրա նոր աշխատությունները Ալ. Շիրվանզադեի, Հ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Մուրացանի, Նար-Դոսի և ուրիշ հայ նշանավոր գրողների մասին, որոնք խոշոր նորություն էին մեր քննադատական մտքի պատմության մեջ։

Ճիշտ է, այդ շրջանի նրա աշխատությունները իրենց վրա զգալիորեն կրում են ժամանակի գրականագիտական մտքի այլևայլ ազդեցություններ, բայց տվյալ դեպքում կարևոր է հեղինակի գաղափարական դիրքորոշումը, գրական երևույթների գնահատման չափանիշը, որով նա վեր հանեց ու արժևորեց հայ գրականության դեմոկրատական-ժողովրդային առաջավոր տրադիցիաները։ Սեզանում առաջին անգամ նա է բաղմակողմանիորեն ուսումնասիրել և ըստ արժանվույն գնահատել հայ կլասիկների ստեղծագործությունները, բացահայտել նրանցից յուրաքանչյուրի արվեստի բնորոշ գծերը։ Այդ գրողների մասին նրա աշխատությունները այսօր էլ կարդացվում են հետաքրքրությամբ։

Այդ տեսակետից մանավանդ նշանակալից է Ալ. Շիրվանզադեին նվիրված ծավալուն աշխատությունը (1911), որն աչքի է ընկնում գրականագիտական մտքի հասունությամբ և խորաթափանց վերլուծումներով։ Ա. Տերտերյանը այստեղ առաջին անգամ բացահայտում է մեծանուն գրողի ռեալիստական արվեստի ճանաչողական ու գեղարվեստական մեծ նշանակությունը, ընդգծում նրա առաջատար դերը հայ գրականության մեջ ռեալիզմի զարգացման գործում։ Ըստ որում, նա իրավամբ բարձր է գնահատում Ալ. Շիրվանզադեի վաստակը և այն դիտում որպես դարաշրջանի, ժամանակի իրականության գեղարվեստական ցայտուն արտահայտություն։

Չնայած որոշ վիճելի դրույթներին, այդ աշխատությունն իր կառուցվածքով, նյութի ընդգրկմամբ և գիտական եզրահանգումներով նշանակալից երևույթ է ժամանակի հայ գրաքննադատական մտքի զարգացման մեջ ընդհանրապես և Ալ. Շիրվանզադեի ստեղծագործության լուսաբանման տեսակետից՝ մասնավորապես։ Դրանով Ա. Տերտերյանը մեղանում փաստորեն սկիզբ դրեց Ալ. Շիրվանզադեի ռեալիզմի պրոբլեմների գիտական ուսումնասիրությանը։

2

Ա. Տերտերյանի գիտական-մանկավարժական գործունեությունը լայն բնույթ ստացավ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ ստեղծագործական աշխատանքի համար ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ։

1921 թ. հունվարին, երբ հիմնադրվեց Երևանի Պետական համալսարանը, Ա. Տերտերյանը դարձավ նրա առաջին դասախոսներից մեկը և այնուհետև իր ամբողջ կյանքը կապեց համալսարանի հետ։ Նա գործուն մասնակցություն ունեցավ հատկապես լեզվի ու գրականության ֆակուլտետի ստեղծմանը և իր ջանքերով հիմնեց հայ գրականության ամբիոնը, որի անփոփոխ

ղեկավարն էր մինչև իր կյանքի վերջը։ Դրա հետ միաժամանակ Ա. Տերտերյանը երկար տարիներ դասախոսական աշխատանք է վարել նաև Երևանի Աբովյանի անվան մանկավարժական և Հեռակա մանկավարժական ինստիտուտներում, Հայաստանի սովետական գրողների միության կից գրական ստուդիայում, ՀԿՊ Կենտկոմին կից պարտիական դպրոցում և այլ ուսումնական հաստատություններում, ամենուրեք վայելելով ջերմ սեր ու հեղինակություն։

Մեծ է Ա. Տերտերյանի ծառայությունը հատկապես մանկավարժների և գիտաշխատողների բարձրորակ կադրեր պատրաստելու ուղղությամբ։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ ներկայումս մեր ռեսպուբլիկայում և նրա սահմաններից դուրս գործող սովետահայ գրականագետների, գրողների, մայրենի լեզվի ու գրականության ուսուցիչների մեծ մասը Ա. Տերտերյանի աշակերտներից է։ Ավելին, քաջագիտակ լինելով եվրոպական և ռուս գրականության պատմությանը, նա այդ բնագավառում ունեցած իր գիտելիքները ևս հայ գրականություն ավանդելիս հաղորդել է ուսանողներին, որոնցից ոմանք այժմ աշխատում են որպես ռուս և արտասահմանյան գրականության մասնագետներ։

Ա. Տերտերյանն ակտիվ մասնակցություն է ունեցել մեր կուլտուր-հասարակական կյանքին և օժանդակել նրա վերելքին։ Բնորոշ է, որ նա մեկն էր մեր այն առաջավոր մտավորականներից, որոնք դեռևս 1921 թ. սեպտեմբերին հրապարակեցին կոչ՝ ուղղված ամբողջ աշխարհի հայ աշխատավորությանը Սովետական Հայաստանին օգնություն կազմակերպելու մասին։ Այնուհետև նա մեծ աշխատանք է կատարել որպես գիտական աշխատողների որակավորման հանձնաժողովի անդամ, որպես բարարական գրականության Թարգմանիչ և այլն։ Դրանց զուգընթաց նա բովանդակալից ելույթներ է ունեցել գրական դիսպուտներում, կարդացել է հրապարակային դասախոսություններ, զեկուցումներով հանդես եկել գիտական նստաշրջաններում և աշխատակցել մեր պարբերական մամուլին։

Ա. Տերտերյանն իր մանկավարժական-դասախոսական աշխատանքը համտորեն զուգակցում էր գիտական գործունեությանը։ Հենց այս տարիներին էր, որ նա ձևավորվեց որպես ուռաջնակարգ գրականագետ-քննադատ և դրսևորեց իր ստեղծագործական լայն դիապազոնը, հետազոտական ոլորտի մեջ առնելով բազմաթիվ հարցեր ու պրոբլեմներ։

Ամենից առաջ պետք է նշել նրա խոշոր վաստակը հայ նոր գրականության գիտական պատմության բուհական սիստեմատիկ դասընթացի ստեղծման գործում։ Դեռևս 1922 թ. Հայաստանի պետական հրատարակչությունը ձեռագրի իրավունքով լույս ընծայեց Ա. Տերտերյանի կարդացած դասախոսությունների սղագրական առաջին պրակը, որտեղ նա նոր տեսանկյունից է ներկայացնում մեր գրականության պատմության նոր շրջանի սկզբնավորումը և այդ առնչությամբ վերաբերում Աբովյանի, Պոռշյանի, Ռաֆֆու, Սունդուկյանի և այլոց գերը։ Հետագայում (1930—1931 թթ.) Հեռակա մանկավարժական ինստիտուտի և Պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետների համար նա գրեց հայ գրականության պատմության առաջադրություններ, որոնք կարող են կազմել մի ստվար հատոր։

Այդ իմաստով մասնավորապես ուշագրավ են 1938--39 թթ. հրատարակված նրա սղագրական դասախոսությունները Վ. Փափազյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ալ. Ծատուրյանի, Ավ. Իսահակյանի, Շ. Կուրղինյանի, Հ. Հակոբյանի և Վ. Տերյանի մասին։ 1930-ական թթ. հայ կլասիկների երկերի վերահրատարակության առթիվ Ա. Տերտերյանը գրեց մի ամբողջ շարք ուսումնասիրություններ, որոնք աչքի են ընկնում համարձակ հարցադրումներով ու գիտական խոր վերլուծությամբ։ Այդ կարգի աշխատություններից առանձնապես արժեքավոր են Մուրացանի «Ընտիր երկերի» քառահատոր ժողովածուի ներածական հոդվածները, Նար-Դոսի «Մեր թաղը» նովելներին, Օտյանի «Երկեր»-ին, Ռաֆֆու «Սամվել» պատմավեպին կցված առաջաբանները, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է համապատասխան պրոբլեմն իր լայնքով ու խորությամբ։ Դրանց մի մասը ծավալուն հետազոտություններ են, որոնք ընդհանրացնում ու ամբողջացնում են տվյալ հարցի մասին եղած մասնավոր դիտողությունները և նոր հորիզոններ բացում հետագա ուսումնասիրողների համար։ Ընդհանրապես պետք է նկատել, որ իր քննադատական գործունեության ընթացքում անվանի գիտնականը ձգտել է ստեղծել կապիտալ աշխատություններ, որոնք ամբողջական գաղափար են տալիս տվյալ գրողի և նրա ապրած ժամանակաշրջանի մասին։ Նմանօրինակ բնույթ ունեն «Նալբանդյանի էսթետիկան» (1939), «Աբովյանի ստեղծագործությունը» (1941), «Պարոնյանի գեղագիտական հայացքները» (1941) և այլ գործեր, որոնց մեջ խոշորապես դրսևորվել է հեղինակի հետազոտական միտքը։

3

Իրրև հայրենասեր գիտնական Տերտերյանը բեղմնավոր գործունեություն ծավալեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Ականավոր գիտնականը լարեց իր բոլոր ջանքերը սովետական առաջավոր գիտությունը մեր ժողովրդի ազատագրական պայքարին ծառայեցնելու համար։

Պատերազմի հենց առաջին ամիսներին նա հանդես եկավ մարտական-հրապարակախոսական բնույթի հոդվածներով, որոնց մեջ մերկացրեց գերմանա-ֆաշիստական զավթիչների ոեակցիոն էությունը և կոչ արեց մեր ժողովրդին ջախջախիչ հակահարված հասցնել լկտի թշնամուն, կրծքով պաշտպանել հարազատ հայրենիքը։ Այդ իմաստով ուշագրավ են նրա «Մեծ ռևոլյուցիայի 25-ամյակը», «Ֆաշիզմի կործանումն անխուսափելի է» և ուրիշ հոդվածներ, որոնցով նա ոգեշնչեց ընթերցողին և ամրապնդեց նրա հավատը հաղթանակի նկատմամբ։

Նույն նպատակով նա շարունակեց ուսումնասիրել և նոր տեսանկյունից բնութագրել անցյալի հայ գրականության ժողովրդա-ազատագրական, հայրենասիրական վեհ տրադիցիաները, բնդգծել դրանց արդիական նշանակությունը։ Արձագանքելով ժամանակի պահանջներին նա իր ուշադրությունը կենտրոնացրեց այնպիսի պրոբլեմների վրա, որոնց գիտական լուսաբանությունը կարող էր պայքարի ոգեշնչել սովետական մարդկանց, օգնել մեր հաղթանակին։ Այդպիսի հայրենասիրական ազնիվ կրքով են տոգորված գիտնականի «Ալիշանը և հայրենասիրությունը», «Հայրենասեր կինը Մերենցի վեպերում», «Թումանյանի հայրենասիրական պոեզիան», «Ակադեմիկոս Ալիշան և ժողովրդական հերոսությունը», «Սոմեղուկյանը և ժողովուրդների բարեկամությունը» (1943), «Հակոբ Հակոբյանը և մեր օրերը» և ուրիշ երկեր, որոնց վերնագրերն իսկ շատ բան են ասում հեղինակի նպատակադրումների մասին։ Դրանց մեջ Ա. Տերտերյանը վեր հանեց մեր գրականության սերտ կապը ժողովրդի առաջավոր ձգտումների հետ, բացահայտեց նրա հայրենասիրական ոգին, ազատարաձգ իդեալներն ու վառ հումանիզմը։ Դրա ակնառու վկայությունը տալիս է սովետահայ անվանի գրող Հր. Քոչարը, ուսումնասիրելով Ալիշանին նվիրված Ա. Տերտերյանի հոդվածը, նա հեղինակին գրել է հետևյալ տողերը. «...Ամսագրի երրորդ գիրքն ինձ հասավ պատերազմի ճակատում։ Տպագրված բոլոր նյութերից առանձնապես հափշտակությամբ կարդացի Ձեր հոդվածը Ալիշանի մասին։ Դուք ցույց եք տալիս երիտասարդությանը, թե ինչի համար են կռվել իրենց հայրերը և ինչ են երազել իրենց ժողովրդի մեծ որդիները, և ցույց եք տալիս այնքան պարզ ու ճշմարտացի, այնքան բնական ձևով եք նկարում էպոխաների կապը, պատմական անալոգիաներն այնքան հստակ տրամաբանությամբ եք գծում, որ թվում է, թե այսօրվա դեպքերին են արձագանքել մեր մեծ նախորդները ժամանակով մեզնից շատ առաջ»։[1]

Եվ արդարև, գրված լինելով հայրենասիրական ջերմ շնչով Տերտերյանի այդ և մյուս աշխատությունները ընթերցողին համակում են ազգային հպարտության ազնիվ զգացումներով, միահյուսված դեպի եղբայրական ժողովուրդներն ու նրանց կուլտուրան տածած խոր հարգանքի ու սիրո հետ։ Դրանց մեջ հեղինակը տարբեր առիթներով անդրադառնում է մասնավորապես այն բարերար ազդեցությանը, որ ունեցել է ռուս առաջավոր գրականությունը հայ գրական-հասարակական մտքի զարգացման վրա։

Պետք է ընդգծել, որ իր գիտական գործունեության ընթացքում Ա. Տերտերյանը միշտ էլ հանդես է եկել որպես ռուսական կուլտուրայի անխոնջ պրոպագանդիստ և ամեն կերպ նպաստել նրա ժողովրդականացմանը մեզանում։ Ելնելով այն ճիշտ հայեցակետից, որ գեղարվեստական գրականությունը ամենից ավելի լավ է ծանոթացնում ժողովուրդներին միմյանց և պայմաններ ստեղծում նրանց բարեկամության հետագա ամրապնդման համար, նա իր հետազոտություններում լայն տեղ է հատկացրել գրական կապերի և գրողների փոխադարձ բարեկամության հարցերին։ Ըստ որում, ինչպես և պետք էր սպասել, նրան ամենից առաջ հետաքրքրել է հայ-ռուսական գրական կապերի պրոբլեմը, որի ուսումնասիրությունը առաջնակարգ նշանակություն էր ստանում մանավանդ պատերազմի տարիներին։ Հենց այդ դիտակցությամբ էր գրված «Բրյուսովը և հայ կուլտուրան» աշխատությունը (1943), ուր հեղինակը լայնորեն բացահայտել է ռուս ականավոր բանաստեղծ-գիտնականի վերաբերմունքը դեպի մեր ազգային մշակույթը և ընդգծել նրա խոշոր դերը հայ ժողովրդի պատմության, պոեզիայի ուսումնասիրման ու ժողովրդականացման գործում։

---

1 «Սովետական գրականություն», 1942, № 5—6, էջ 213։

Ռուս գրականության մասսայականացման, ինչպես և անցյալի հայ գրողների ստեղծագործական կյանքում ռուս գրականության և նրա առանձին ներկայացուցիչների առաջատար դերի լուսաբանման իմաստով ուշադրավ են նաև «Պուշկինը հայ գրականության մեջ», «Անմահ կոմեդիան» (Ա. Գրիբոյեդովի «Հեկլրից պատուհասի» մասին), «Ռուս մեծ առակախոս-բանաստեղծը» (Ի. Կռիլով) և, վերջապես, «Վ. Գ. Բելինսկի» հետազոտությունները։

Դրանցից առանձնապես արժեքավոր է Բելինսկուն նվիրված ստվարահատոր մենագրությունը, որը լուրջ ավանդ է ռուս մեծ քննադատ-հրապարակախոսի մասին եղած հարուստ գրականության մեջ։ Բելինսկու կյանքի ու գործունեության համակողմանի բնութագրման հետ միասին Ա. Տերտերյանը քննարկում է բելինսկիագիտության այնպիսի էական խնդիրներ, ինչպիսիք են՝ Բելինսկին իբրև քննադատ, Բելինսկու էսթետիկան և էթիկան, Բելինսկին արվեստի և գրականության պատմության պրոբլեմների մասին, նրա կրած և թողած ազդեցությունը, լեզուն և ոճը, ժողովրդայնության և հայրենասիրության մեկնաբանությունը, Բելինսկին իբրև գրական մանկավարժ, Բելինսկին հայ գրականության մեջ, Բելինսկին և մեր օրերը։ Կարելի է ասել, որ այդպիսի լայնքով ու խորությամբ մինչ այդ դեռ ոչ ոք չէր ուսումնասիրել Բելինսկուն, որի գրական, գիտական և փիլիսոփայական ժառանգությունը մեկնաբանելիս Ա. Տերտերյանը երևան է բերել բազմակողմանի մոտեցում։ Կարելի է, իհարկե, վիճել կամ չընդունել նրա այս ու այն դրույթը, բայց անառարկելի է հեղինակի լավատեղյակությունը նյութին, նրա գրականագիտական բարձր ճաշակը, գիտուդականությունը և փաստարկման տրամաբանությունը։ Այդ հնկատելի է, մանավանդ, բոլոր այն դեպքերում, երբ Ա. Տերտերյանը խոսում է գրական կապերի ու ազդեցությունների մասին։ Վերցնենք թեկուզ «Բելինսկին հայ գրականության մեջ» գլուխը, ուր հեղինակը հարուստ փաստերի հիման վրա ցուցադրում է այն արդասավոր ազդեցությունը, որ ռուս մեծ քննադատը թողել է մեր գրական-հասարակական մտքի զարգացման վրա սկսած Արովյանից ու Նալբանդյանից մինչև հայ մարքսիստների ավագ սերունդը։ Ըստ որում, այդ ազդեցությունը լուսաբանելիս նա չի անտեսում մեր ժողովրդի սոցիալ-կուլտուրական ընդհանուր մեռակը, ինչպես և մեր գրականության ազգային ինքնատիպությունը։

Ա. Տերտերյանի այս, ինչպես և վերը նշված աշխատությունները հեղինակին բնութագրում են որպես ականավոր գրականագետի. նրա երկերի մեջ խոր լուսաբանություն են ստացել գրականության պատմության և տեսության շատ հարցեր, որոնց առաջադրման ու լուծման ընթացքում դրսևորվել են հեղինակի լայն մտահորիզոնը, գիտական առողջ օբյեկտիվությունը և բաղաբացիական ակտիվությունը։ Հենց այդ ամենն էլ նրան դարձրին հանրաճանաչ հեղինակություն մեր գրականագիտական մտքի ասպարեզում, ուր նա ստեղծել է մնայուն արժեքներ։ Ահա թե ինչու, երբ պատերազմի ահեղ օրերին (1943) հիմնադրվեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան, Ա. Տերտերյանը կառավարության կողմից հաստատվեց նրա անդրանիկ կազմի մեջ որպես իսկական անդամ։

4

Իր կյանքի վերջին տարիներին ականավոր գիտնականը զբաղված էր հայ քննադատական ռեալիզմի պատմության ուսումնասիրությամբ։ Բնորոշ է, որ այդ ասպարեզում նրա հետազոտական միտքը ամենից առաջ կենտրոնացավ այնպիսի հեղինակների վրա, ինչպիսիք են Պռոշյանը, Շիրվանզադեն և Զոհրապը, որոնցից յուրաքանչյուրը, ինչպես հայտնի է, նոր աստիճան է նշանավորել հայ ռեալիստական սրձակի զարգացման պատմության մեջ։ Այդ գրողների մասին Ա. Տերտերյանի ուսումնասիրությունները, որքան էլ տարբեր լինեն իրենց բնույթով, ծավալով ու խորությամբ, ունեն նույն նպատակադրումը՝ վեր հանել հայկական ռեալիզմն իր զարգացման տարբեր փուլերով և արժեքավորել նրա ականավոր ներկայացուցիչներին։ Այդ աշխատությունները միաժամանակ ցույց են տալիս ինքնահաղթահարման այն մեծ ջանքերը, որոնց շնորհիվ հեղինակը կարողացավ հանգել նոր և ճիշտ հետևություններ։ Մի կողմ թողնելով անցյալում իր պաշտպանած որոշ միակողմանի ու սխալ թեզերը՝ նա հետևողականորեն կիրառեց պատմականության սկզբունքը և բոլորովին նոր խոսք ասաց նշված գրողների մասին։

Այդ վերաբերում է նախ և առաջ «Զոհրապի արվեստը» վերնագրով հետազոտությանը (1946), որը քննական գիտողություններով հարուստ մի շարադրանք է։ Զոհրապին բնութագրելով որպես հայ ռեալիստական նովելի մեծ վարպետ, Ա. Տերտերյանը սեղմ, բայց դիպուկ վերլուծությամբ բացահայտում է նրա ստեղծագործական վաստակի սոցիալական բովանդակությունը, ռեալիզմի, տիպականացման արվեստի և ընդհանրապես դեղարվեստական վարպետության առանձնահատկությունները։

Անհամեմատ բարձրարժեք գործեր են «Պերճ Պռոշյան» (1955) և «Շիրվանզադեի գրական տիպերի հանրագիտարան» (1959) մենագրությունները, որոնք լույս տեսան հեղինակի մահվանից հետո։ Դրանք, լինելով երկար տարիների տքնաջան աշխատանքի և մանրակրկիտ հետազոտության արդյունք՝ հարստացնում են մեր իմացությունը նշված գրողների ու նրանց ապրած ժամանակի մասին և կարող են օրինակ հանդիսանալ գրականագիտական խորազնին ուսումնասիրության։

Որ տեսակի մեջ աննախընթաց երևույթ էր Շիրվանզադեի գրական տիպերին նվիրված աշխատությունը, որի առանձին գլուխներ մեր մամուլում հրապարակվել են դեռևս 1945—1946 թթ.։ Այստեղ հեղինակը պատմա-գրական լայն ֆոնի վրա ներկայացնում է մեծանուն ռեալիստի գրական-հասարակական գործունեությունը, բացահայտում նրա ստեղծագործության գաղափարա-գեղարվեստական տենդենցները՝ կապված ժամանակի ու միջավայրի կոնկրետ հանգամանքների հետ։ Նա ցույց է տալիս, ոչ ժառանգելով նախընթաց շրջանի հայ գրականության լավագույն տրադիցիաները և դրանց միացնելով ռուս ու համաշխարհային գրականության նվաճումների յուրացումը՝ Շիրվանզադեն թե՛ իբրև վիպասան ու դրամատուրգ, և թե՛ որպես արվեստի տեսաբան ու քննադատ, հսկայական դեր է կատարել մեր ժողովրդի կուլտուրական առաջընթացի գործում։ Այդ դերը առավել պարզորոշ է գտնում աշխատության «Շիրվանզադեի տիպերի բնութագիրը» գլխում, որը վերլուծական մի լուրջ ուսումնասիրություն է, հագեցված բանասիրական նուրբ դիտողություններով և ներկայացված բառարանային ձևով։

Ալ. Շիրվանզադեի հիսունվեց մեծ և փոքր ծավալի երկերի ուսումնասիրությամբ Ա. Տերտերյանը ներկայացնում է շուրջ երեք հարյուր տիպերի վերլուծություն։ Այս կամ այն գրվածքի մեջ գործող անձերից վերցնելով առավել բնորոշները՝ նա բայլ առ բայլ հետևում է հեղինակի գրական ուղեգնացությանը՝ սկսած «Հրդեհ նավթ.գործարանում» պատմվածքից մինչև «Վերջին շատրվանը» կինոսցենարը և նշում նրա առաջընթացի կարևոր հանգրվանները։ Ճիշտ է, նա երբեմն անդրադառնում է նաև երկրորդական հերոսների, բայց այն չափով, որչափով դա անհրաժեշտ է տվյալ գլխավոր տիպի կամ նրա միջավայրի ամբողջացման համար։ Չմոռանանք ասել, որ գրական տիպերի բնութագրման ընթացքում Ա. Տերտերյանը լայնորեն օգտագործում է նաև գրողի մեմուարային երկերը, որոնց մեջ հանդես եկող անձերից շատերը նույնպես տիպականացվել են և դարձել են այս կամ այն խավի բնորոշ ներկայացուցիչ։

Տարբեր գրադրությունների, տարիքի, սեռի, երբեմն էլ տարբեր ազգի պատկանող այդ կերպարների բնութագրմամբ Ա. Տերտերյանը լուսաբանում է ականավոր ռեալիստի արվեստի սերտ կապը դարաշրջանի հետ և վեր հանում նրա ստեղծագործության ճանաչողական ու գեղագիտական մեծ նշանակությունը։

Գալով Պռոշյանին նվիրված մենագրությանը՝ պետք է նկատել, որ նրա մեջ առաջին անգամ տրված է ականավոր գրողի կյանքի ու ստեղծագործության ամբողջական պատկերը։ Մեր առաջ ելնում է Պռոշյանը իր ողջ հասակով թե՛ իբրև մարդ, և թե՛ որպես ժողովրդական գրող։ Կոնկրետ փաստերի ու տվյալների խորազնին ուսումնասիրության հիման վրա Ա. Տերտերյանը հստակորեն ընդգծում է գրողի յուրահատուկ դիմանկարը, որն արտացոլում է իր դարաշրջանի տիպական գծերը։

Նա վանելով ու մերկացնելով անցյալում Պռոշյանի շուրջը ստեղծված լիբերալ-բուրժուական և գոնիկ սոցիոլոգիական-ազգային մտայնությունը, որը ճիգ ու ջանք էր թափում գրողին ներկայացնել որպես կղերամիտ պահպանողականի, Ա. Տերտերյանը նրան բնութագրում է իբրև գյուղացիական դեմոկրատ, որի «հասարակական-քաղաքական հայացքների կիզակետը աշխատավոր գյուղացու երջանկությունն է հայրենի հողի վրա»[2]։

Այս տեսակետը նա հիմնավորում էր գրողի ստեղծագործության գաղափարական բովանդակության հմուտ վերլուծությամբ, որը սույն աշխատության արժանիքներից է։ Պռոշյանի կյանքի ու գործունեության բնությունը խստորեն ենթարկված է նրա աշխարհայացքի ու ստեղծագործական մեթոդի բացահայտման խնդիրներին։

Ըստ արժանվույն գնահատելով Պռոշյանի տեղն ու դերը հայ դեմոկրատական գրականության մեջ որպես սոցիալական վեպի սկզբնավորողի, Ա. Տերտերյանը միաժամանակ նշում է նրա աշխարհայացքի ու ստեղծագործական մեթոդի պատմական որոշ սահմանափակությունը։

Ա. Տերտերյանի աշխատությունը ոչ միայն հարստացնում է մեր իմացությունը Պռոշյանի մասին, ընդլայնում նրա գործունեության ուսումնասիրման ու հետազոտման ոլորտները, այլև

2 Ա. Տերտերյան, Պերճ Պռոշյան, Երևան, 1955, էջ [illegible]

առաջադրում ու լուսաբանում այնպիսի նոր հարցեր, որոնք մինչև այդ դրեթե չեն շոշափվել։ Այդպիսի հարցերից են, օրինակ, Պոռշյանի վիպագրական առանձնահատկությունները, հայ գրականությունն ու կուլտուրան Պոռշյանի գնահատությամբ, Պոռշյանի լեզուն ու ոճը, Պոռշյանի գրական կապերը, նրա ստեղծագործության արդիական արժեքը և այլն։ Ըստ որում, նշված պրոբլեմները քննարկելիս հեղինակը համապատասխան երևույթը ներկայացրել է իր աստիճանական զարգացման մեջ։

5

Մեր այս սեղմ ակնարկից իսկ դժվար չէ տեսնել, թե ինչպիսի արդյունավետ ստեղծագործական կյանք է ունեցել Ա. Տերտերյանը։ Նա թողել է գիտական մեծ ժառանգություն, որ աչքի է ընկնում լայն ընդգրկմամբ, փաստական նյութի հարստությամբ, տեսական լուրջ ընդհանրացումներով և տարբեր ժողովուրդների գեղարվեստական փորձի խոր արձագանքներով։ Հայ հին գրականության հուշարձաններից մինչև սովետահայ գրողների ստեղծագործությունը, հայրենի բանաստեղծից մինչև ռուս խոսքի վարպետները ու «Սիրելիների երգը»,—ահա հարցերի այն ոլորտը, որ բնորոշ է Ա. Տերտերյանի հետազոտական մտքի համար։

Որպես պրոֆեսիոնալ գրականագետ և քննադատ, նա հատկապես մեծ աշխատանք է կատարել հայ նոր գրականության պատմության ուսումնասիրության բնագավառում, ուր նա երկար տարիներ հետազոտական լայն աշխատանք էր կատարել բազմազան պրոբլեմների շուրջը։ Այդ գրականությունն իր երկու հատվածներով (արևելյան ու արևմտյան) մշտապես եղել է գիտնականի ուշադրության կենտրոնում և դժվար է նշել մի՞ թե շատ աչքի ընկնող որևէ հայ գրող, որին մեկ կամ մի քանի անգամ անդրադարձած չլինի նա։ Մեր գրա-պատմական զարգացման պրոցեսն իր հիմնական փուլերով ու առաջատար տենդենցներով, ժանրային ու ոճական շատ առանձնահատկություններով լուսաբանվել ու գնահատվել է նրա երկերում։

Ա. Տերտերյանը առաջիններից էր, որ սառույց փաստերի ուսումնասիրության հիման վրա որոշեց մեր դասական գրողներից շատերի ստեղծագործության էությունը և գիտականորեն սահմանեց նրանցից յուրաքանչյուրի տեղը պատմա-գրական շարժման շղթայում։ Նրան հավասարապես հետաքրքրել է թե՛ բանաստեղծը, թե՛ արձակագիրը, և թե՛ դրամատուրգը, որոնց երկերի հմտալից վերլուծությամբ բացահայտել է տվյալ հեղինակի աշխարհայացքի ու մեթոդի բնորոշ գծերը։

Մեծ է Ա. Տերտերյանի երախտիքը մասնավորապես հայ բանաստեղծության և վիպասանության հարուստ փորձը ուսումնասիրելու, տեսականորեն ընդհանրացնելու ասպարեզում։ Արովյանի, Մերենցի, Բաֆֆու, Մուրացանի, Դեմիրճյանի ու Զորյանի պատմա-գեղարվեստական երկերի խոր ուսումնասիրությամբ նա մշակեց հայ պատմավեպի ամբողջական տեսություն, որ կարևոր ներդրում էր մեր գրականագիտության մեջ։ Նույնպիսի անխոնջ եռանդով նա ուսումնասիրեց հայ երգիծական գրականությունը, որի նույնիսկ երկրորդական դեմքերը չվրիպեցին նրա տեսադաշտից։ Ավելին, նրբանկատ լինելով գրական երևույթները դիտելիս, նա երգիծանքի տարբեր բացահայտեց նույնիսկ այնպիսի երկերում, որոնք ընդհանուր առմամբ երգիծական չեն։

Ա. Տերտերյանն էր դարձյալ, որ առաջին անգամ մեզանում լրջորեն զբաղվեց հայ կլասիկների գեղագիտական ժառանգության ուսումնասիրությամբ։ Այդ իմաստով բարձրարժեք գործ է մանավանդ «Պարոնյանի գեղագիտական հայացքները» աշխատությունը, ուր լայնորեն բացահայտված են հանճարեղ երգիծաբանի գեղագիտական ըմբռնումները և դրանց կոնկրետ մարմնավորումը նրա ստեղծագործական պրակտիկայում։ Հայ քննադատական ռեալիզմի ծագման ու զարգացման շատ հարցեր նույնպես Ա. Տերտերյանն է առաջ քաշել և մեկնաբանել։ Նրա հետազոտական ջանքերի շնորհիվ է, որ առավել պարզ դարձան մեր ռեալիստական գրականության նվաճումները՝ Արովյանից մինչև Զորաբ։

Վերջապես չի կարելի չնշել Ա. Տերտերյանի դերը հայ-ռուսական գրական կապերի ուսումնասիրության, ռուս առաջավոր կուլտուրայի պրոպագանդման ու մասսայականացման գործում, որի մասին մենք արդեն խոսել ենք։ Այստեղ կուզենայինք ընդգծել միայն այն հանգամանքը, որ գրական կապերի պրոբլեմը քննելիս նա հանդես էր բերում պատմական կոնկրետ մոտեցում և խուսափում ինչպես վերացական զուգադրություններից, այնպես էլ սխեմատիկ ֆորմուլներից։

Գրական-պատմական ուսումնասիրություններին զուգընթաց Տերտերյանը սիստեմատիկաբար զբաղվել է նաև գրականության տեսության հարցերով։ Նրա երկերում արժեքավոր դիտո-

դություններ կան գրական ժանրերի, մեթոդների, հոսանքների, ազդեցությունների, ինչպես և ստեղծագործական վարպետության հետ կապված այլևայլ խնդիրների մասին։

Ա. Տերտերյանի գրականագիտական հայացքների զարգացումը, հարկավ, չի ընթացել սահուն ու հարթ. նա ևս ունեցել է վրիպումներ ու սայթաքումներ, որոնք դպլապես պայմանավորված են եղել գրականագիտական մտքի «զիգզագներով» մեր իրականության մեջ։ Դրանցից կարելի է հիշել տարբեր ժամանակներում Ա. Տերտերյանի տված տուրքը գոնհիկ սոցիոլոգիզմին, պատմա-համեմատական մեթոդին և այլն, որոնց հաղթահարման ջանքերը, սակայն, նրա վերջին շրջանի գործերում ակներև են։ Չի կարելի զանց առնել նաև նրա առանձին երկերում նկատվող չարդարացված որոշ համեմատություններ, մանկավարժական նպատակով պայմանավորված շեղումներ, կրկնություններ, ինչպես և արդի դրականության հարցերին քիչ անդրադառնալը։

Չնայած նման թերություններին, Ա. Տերտերյանի գիտական վաստակը իր հիմնական մասով մնում է որպես խոշոր ավանդ հայ գրականության պատմության ուսումնասիրության մեջ։ Ինչպես առանձին հեղինակների, այնպես էլ գրական մի շարք երևույթների նրա տված գնահատականները այսօր էլ շատ կողմերով պահպանել են իրենց իմաստն ու կարևոր նշանակությունը։

Ահա թե ինչու բարձր գնահատելով Ա. Տերտերյանի գիտա-մանկավարժական գործունեությունը՝ սովետական կառավարությունը նրան պարգևատրեց Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և մի շարք մեդալներով։ Նրան շնորհված էր նաև գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Մինչև իր կյանքի վերջը (1953 թ. հոկտեմբերի 6) մեծավաստակ գիտնականը անշահախնդիր ծառայեց իր ժողովրդին, սիրեց նրա և եղբայրական ժողովուրդների հոգևոր մշակույթը և իր ուժերն ի սպաս դրեց այդ մշակույթի զարգացմանն ու ժողովրդականացմանը։

ВЫДАЮЩИЙСЯ ЛИТЕРАТУРОВЕД

Г. А. САРКИСЯН

(Резюме)

Долгий научно-педагогический путь прошел академик АН Армянской ССР А. А. Тертерян, 10-летие со дня смерти которого исполняется в этом году.

Начав свою деятельность в годы первой русской революции, Тертерян около полувека преданно служил своему родному народу и обогатил армянское литературоведение множеством ценных исследований. В результате плодотворной работы Тертеряна был создан систематический курс для вузов по истории армянской новой литературы.

В частности, Тертеряном была изучена история возникновения и развития армянского критического реализма от Абовяна до Зограба. В этом отношении интересны: «Творчество Нар-Доса» (1913), «Творчество Отяна» (1937), «Искусство Зограба» (1946), «Перч Прошян» (1935), «Энциклопедия литературных типов Ширванзаде» (1939) и др.

Наряду с этим впервые в нашем литературоведении Тертерян серьезно занялся изучением эстетического наследия армянских классиков, результатом чего были такие капитальные труды, как «Эстетика Налбандяна» (1939), «Эстетические взгляды Парояна» (1941).

Велика роль Тертеряна в деле изучения армяно-русских литературных связей, пропаганды и популяризации русской передовой культуры. С этой точки зрения особый интерес представляют труды: «Пушкин в армянской литературе» (1939), «Брюсов и армянская культура» (1943), «Бессмертная комедия» (1944), «Великий русский поэт-баснописец» (1944), «В. Г. Белинский» (1948).

Тертерян систематически занимался литературно-теоретическими вопросами. В его сочинениях есть ценные замечания о литературных жанрах, методах, течениях, влияниях, а также о задачах, связанных с творческим мастерством.

Развитие литературных взглядов Тертеряна не было гладким, без ошибок, преодоление которых особенно заметно в его последних трудах.